ԱՆՑԵԼԻ ԹՈՄՈՒՄ
ԳԱՂԹԱՊԱՏԻՍ

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

1998 թ. մայիսի 28-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության անկախության 80-ամյակին՝ նախագահությամբ Գերաշնորհ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Պոզապալյանի: Ներկա էին նաև միաբաններ Անթիլիասից:

Եղբայրամի կողմից Հայաստանի Հանրապետության հիմնի ու Ճեմարանի քայլերգի կատարումից հետո, բացման խոսքով հանդես եկավ Ճեմարանի տեսուչ Հայկազուն ծ. վարդապետ Նաջարյանը:

Հանդիսության ընթացքում ուսանողները կատարեցին մի շարք հայրենասիրական երգեր, կարդացին բանաստեղծություններ, բանախոսությամբ հանդես եկավ Ճեմարանի դասախոս պրն. Ավետիս Հարությունյանը:

1918 թ. մայիսի 28-ի Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծումն ու հիմնադրումը մեծապես կապված է Սարդարապատի ճակատամարտում հայ ժողովրդի տարած մեծ հաղթանակի հետ: Սարդարապատի ճակատամարտը հայ ժողովրդին, իր բազմադարյան գոյապայքարի քառուղիներում, ևս մեկ անգամ փրկեց ֆիզիկական ընաջնջման վտանգից, հային հայ պահեց՝ հասցնելով մինչև մեր ժամանակները, մինչև այսօր: Անցած 80 տարիների ընթացքում այս հաղթանակի ոգին մշտապես ուղեկցել է հային: Այսօր, երբ մեր անկախ հանրապետությունում բոլոր պայմանները կան է՛լ ավելի փառաբանելու հայ ազատատենչ ոգին, Հայաստանի տարբեր վայրերում, սկսած Բաշ-Ապարանից, Ղարաքիլիսայից մինչև Երևան ու Սարդարապատ, մեծ շուքով տոնվում է այդ հաղթանակի 80-ամյակն ու առաջին հանրապետության ստեղծումը:

Խորհրդանշական է, որ վերաբացված Գևորգյան Ճեմարանի տեսուչ Հայկազուն Ծ. վարդապետ Նաջարյանն իր բացման խոսքում բոլորին հորդորեց իրենց մեջ վառ պահել այն հաղթական ոգին, որը տիրում էր Սարդարապատում մարտնչող զինվորների սրտերում: Մենք հպարտ ենք, որ 80 տարիներ հետո այդ ամենը հիշելու, արտահայտելու և այսօր մեր իրավունքը պաշտպանելու առիթը մեզ է՛ ընձեռված: Մի պահ խորհենք, փորձենք գնահատել այն դասը, որ քաղում ենք անցյալից՝ Սարդարապատի ճակատամարտից: Այս պայմաններից, որ արված են մեզ այսօր, որքանո՞վ ենք կարողանում օգտվել և դրանք օգտագործել ի նպաստ մեր գործերի՝ իբրև Ճեմարան, իբրև ապագա հոգևորականներ, իբրև Հայ Առաքելական Եկեղեցու սպասավորներ:

Մենք այսօր ոչ թե փառք ու պատիվ պիտի փնտրենք անցավոր ու ժամանակավոր երևույթների մեջ, այլ, ներշնչված մեր սուրբ հայրերի կեցվածքով, կարողանանք ոգեշնչվել ու օրինակելի սպասավորները լինել մեր Եկեղեցու և ժողովրդի: Կյանքի այն ոսկե շրջան, որ քայքայման վտանգի տակ էր և ամբապնդվեց Սարդարապատի հերոսամարտով, այսօր մենք ևս շարունակենք, որպեսզի հայ ժողովուրդն իր քրիստոնեավայել խաղաղ ու ստեղծարար աշխատանքով կարողանա ապրել նաև երրորդ հազարամյակում:

Փակման խոսքով հանդես եկավ Գերաշնորհ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Պոզապալյանը, որը Սարդարապատի ճակատամարտում տարած հաղթանակն իր կարևորությամբ համեմատեց Ավարայրի հետ: Նա հայ ժողովրդի զավակների նահատակությունը նկատեց իբրև սուրբ հաղորդություն Քրիստոսի հետ:

ՄՈՒՇԵՂ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ջ լսարան